

19-րդ ԴԱՐ

19. CENTURY

Եւրոպայի մէջ, 19-րդ դարը կը նկատուի «Անցման Շրջան» մը, Նոր Դարաշրջանի (Modern Era) եւ Արդի Ժամանակակից Դարաշրջանի (Contemporary Era) միջեւ: 19-րդ Դարը կը յատկանշուի, գլխաւորաբար իր բերած քաղաքական, ընկերա-հասարակական (սոցիալ) ու գիտական նորութիւններով ու մեծ փոփոխութիւններով, որոնք նաեւ իրենց ազդեցութիւնը պիտի ունենային փիլիսոփայութեան եւ բարոյագիտութեան վրայ:

1789 թուականի ֆրանսական յեղափոխութենէն ետք, քաղաքական մարզի մէջ, նկատի ունենալով ազգային ինքնորոշման իրաւունքը, կը գոյանային գերիշխան *ազգային* պետութիւններ: Ազատականութեան (Liberalism) նպատակը բանականութեան իշխանութիւնն էր, ինչպէս նաեւ *մարդու հիմնական իրաւունքները*⁽²⁹⁾ (Human Rights):

Դրամատիրութեան (Capitalism) դէմ, տրամաբանական ձեւով, կը զարգանար *ընկերվարական* (Socialism) շարժումը: Գիտութեան նորութիւնները ու ճարտարարուեստի զարգացումը կու գային մէկ կողմէ բարձրացնել մարդոց ապրելակերպի մակարդակը, սակայն միւս կողմէ պիտի յայտնուէին նոր դժուարութիւններ, որոնցմէ կարելորագոյնը ընկերային լարուածութիւնն է, որ կը յառաջանար ընկերային դասակարգերու տարբերութիւններու սրումով ու խորացումով: Արդարեւ, մեծահարուստ-գործատէր դասակարգը կը կեղեքէր աղքատ-բանուոր դասակարգը:

19-րդ դարու երկրորդ կիսուն, գիտական մեծ ազդեցութիւն ունեցող նորութիւնը անգլիացի բնագետ **Չ. Դարվինի** (Charles Darwin, 1809 – 1882 թ.) *բարեշրջական տեսութիւնն* է, որ պիտի զարգանար ու դառնար նոր ուղի մը՝ *բարեշրջապաշտութիւն* (Evolutionism) անուան տակ: Գիտական այս խոշոր նորութիւնը, կենսաբանութենէն (Biology) եւ ծնաբանութենէն (Genetics) գատ, իր ազդեցութիւնը պիտի ունենար նաեւ ընկերային գիտութիւններու զանազան մարզերու վրայ՝ եւ միևնույն մեր օրերը: Ասոր կողքին, հոգեբուժութեան մարզին մէջ, **Ս. Ֆրոյդ** (Sigmund Freud, 1856 – 1939 թ.), աստորիացի բժիշկ-հոգեվերլուծաբանը, կը յայտնաբերէր մարդկային *անգիտակից* (Unconscious) ներքին մղումները, իր հոգեվերլուծութեան (Psychoanalysis) միջոցով:

(29) **Մարդու հիմնական իրաւունքները** (Human Rights), որպէս հասկացութիւն, տե՛ս Մաս – 9, Էջ 503: